84-2
U-86

2285

Ungarn
Ueber Ungarnschaft

Fuqm
1898

2011

84-2
Մ-86

ՄՈԼԻԵՐ

ԿԵՂԾ ԱՋԱՆՈՒՀԻՔ

Les

Precieuses Ridicules

Թարգմանեց Ֆրանսերէնէ

ՄԵԼԻՔ Ե. ՊԷՅԼԻԲՃԵԱՆ

ԲԱԳՈՒ
ՏՊԱՐԱՆ «ԱՐՕՐ»
1898.

5806
84-2
Մ-86
32
Ակ

ՄՕԼԻԵՐ

ԿԵՂԾ-ԱԶՆՈՒՈՒՀԻՔ

(Les Precicuses Ridicules)

Թարգմանեց Ֆրանսերէնէ

ՄԵԼԻՐ Ե. ՊԷՑԼԻՐԲԷՅԵԱՆ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ Գ
C.C.P.A Публичная Биб
7/XI-1922
именна, Мясник
Ս. ՍՅԱՍՆԻԱՆԻ
2003
001
53923
~~061/XI 37~~
17/IV 76

ԲԱԳՈՒ
ՏՊԱՐԱՆ «ԱՐՕՐ»
1898.

607

Дозв. цензурою 11 Августа 1898 года, г. Тифлисъ.

ՄՕԼԻԵՐ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Յայտնի է որ Լուդովիկոս ԺԳ. ի թագաւորութեան առաջին տարիներին՝ մի սիրուն եւ խելացի տիկին, Կատարինէ տը Վիվօն, տը Ռամպույէ մարքիզի կինն, ի Փարիզ իր ապարանքի մէջ բացաւ մի ակումբ, ուր անընդհատ կը յաճախէին ազնուական դասի կանայք, պալատական անձինք, եւ գրագէտներ: Այդ ակումբն, կէս աշխարհիկ կէս գրական, որն ընտիրեան մեծ ազդեցութիւն պիտի ունենար ԺԷ. դարու ընկերութեան եւ լեզուի վրայ, իր բազմայաճախ հիւրերի կարգին մէջ վայելեց, յաջորդապէս կամ փոփոխակի, Վուադիւ, Պալզաք, Սէկրէ, շա ՌօշՃուգօյ, Գօնդէ, Գորնէյլ, Բասգալ, Պօսիւէ, Գօրէն եւ Շաբրլէն, այսինքն խելացի, տաղանդաւոր, սրամիտ անձնաւորութիւններ եւ մի քանի տխմարներ: Դժբաղդաբար սրամիտներն, գիրենք գերազանցողների թոյլտուութեամբն խրախուսուած, յառաջ գնացին, ազդեցութիւն ընտացան եւ իրանց շուրջն իմաստակութեան դիկտատորութիւն հաստատեցին: Կանայք՝ որ միշտ շատ ընդունակ են փայփայանաց անձնատուր լինելու, մարդոց հետ մրցման մտան եւ մի ծաղրելիք

միւսն, ամենին այր թէ կին՝ հասան այն տեղ՝ որ ուզեցին զգացումներն եւ լեզուն զտելով բարեփոխել:

Նոքա, կ'ըսէ, Լայրիւէր, դիւրահասկանալի ոճով խօսին ռամիկներին կը թողեին: Իրանց մէջ արդէն նուազ պայծառութեամբ ըսուած մի բան՝ իր հետ կը բերէր մի ուրիշն՝ աւելի խաւար, զոր կը գերազանցեին այնպիսի ճշմարիտ առեղծուածներով՝ որոնք միշտ երկարատեւ ծափահարութիւն յառաջ կը բերեին:

Շնորհիւ այն ամեն բաների՝ զորս իրանք փափկութիւն, զգացողութիւն եւ արտայայտութեան նրբութիւն կ'անուանեին, հասան վերջապէս այն տեղ՝ որ այլեւս ոչ ոք կը հասկանար իրանց, եւ ոչ ալ իրենք իրար կը հասկանային: Այդ խօսակցութեանց մէջ ոչ ուղղադատութիւն, ոչ խելք եւ ոչ ալ ամենադոյզն տաղանդ պէտք էր՝ այլ միայն սրախօսութիւն՝ այն ալ ոչ թէ շաւագոյնն, այլ այն որ կեղծ է եւ որու մէջ մեծ տեղ բռնող երեւակայութիւնն է:

Այդ ընկերութեան մէջ փայլող կանայք, զորս այնքան շաւ կը նկարագրէ Լայրիւէր, եւ որոնք ճանչցուեցան աղնուհիք անուամբ, կերպեր, ձեւեր տուին արքունեաց, փարիզեան բարձր ընկերութեան եւ նոյն իսկ գաւառներին: Աղնուհիք՝ վարք ու բարքի կողմէ անբասիր՝ շատ մեծ յարգանք ստացան, իրանք դարձան շաւագոյն ձեւի եւ ընտիր լեզուի գերազանց իրաւասէրներն, եւ նոցա ամենահոչակաւորն, տիկին տը Ռամպուշիէ, կարողիկ եկեղեցոյ բեմէն հանդիսական մեծարանք ստացաւ:

Հարուածել Աղնուհի-ներու վիպական դիւրազգածութիւնն՝ հեգնել ճիշտն իրանց եւ այն զգրագէտներու զորս իրանց դարպասողներ դարձրել էին, Մոլիէռի կողմանէ այդ ոչ միայն վրէժ մտքի եւ շաւ ընտրութեան, այլ նոյն իսկ արտոնութեան մի արարք էր, քանի որ նա պիպէս կոռի կը մտնէր, մէկ կողմանէ գրագէտներու հետ, որոնք մեծ պաշտպանութիւն կը վայելեին, եւ միւս կողմանէ կանանց հետ, որոնց ընկերական դիրքն մեծ վարկ կ'ապահովէր իրանց:

Ուստի Մոլիէռ, իր ճանապարհութեան յանդուգն մասերն թերեւացնելու նպատակաւ, ուշադիր եղաւ իր խաղի խորագրի մէջ աղնուհիք բառին կցելու կեղծ մակդիրն, ուզելով այսպէս ցոյց տալ երկու դասակարգ. մին, թէ իր ժամանակի հասարակութեան հետ ինքն ալ կ'ընդունի աղնուհիք անունն, իբր պատուանուն մի կնոջ, երբ այդ, ըստ Ժօքրոյի նկատողութեան, կ'ենթադրէ ազնիւ վեհանձնութեան, փափուկ զգացմանց, նուրբ մտքի եւ կրթութեան իտէալն. այլ թէ ամբոխի ծաղրն ու ծանակն կ'ենթարկէ զայն՝ երբ դա կը ներկայէ մի միայն փափկութեան կեղծիք, սուտ համեստութեան ծայրա-

հեղուրիւն եւ սրախօսութեան ունայնութիւն:

Այս ճարտար զանազանութեամբ, որով հեղինակն ինքզինք կը պահպանէ ողջախոհ ընկերութեան աչքեր, թատերախաղի երգիծական հիւսուածքն բնաւ չէր նսեմանար. վասն զի չափազանցելով հասարակ քաղաքացիներուն գրագիտական յանձնառ հաւակնութիւնն, վիպական ցնորքներն եւ լեզուական ինքնահաւանութիւնն, նա օ միասին կը հարուածէր նոցա արուեստակեալ արարքի մէջ, թէ տը Պոյլեօնի, տը Լօնկվիլի եւ տը Ռանկուլեէի արարքներն որոնք այդ ուղղութիւնն ստեղծած էին, եւ թէ քաղաքին՝ որ կը չափազանցէին, ինչպէս միշտ, օրինակելով բարձր ընկերութեան ծաղրելիներն:

Մի քանի գրական պատնագիրք, ի միջի այլոց եւ Վոլթէր, ըսած են թէ կեղծ ազնուութիւնը ներկայացուած է առաջին անգամ գաւառներն. դա սխալ է, այս գործն, ըստ Ժօճրոյի վկայութեան համ ու յաջողութիւն կարող էր ունենալ միայն մայրաքաղաքին մէջ, որ կեդրոնն էր չարիքին, եւ արդարեւ այս տեղ ներկայացուեցաւ 1656 նոյեմբ. 18-ին: Յաջողութիւնն անհուն էր. տը Ռանկուլիէի ամբողջ շրջանն ներկայ գտնուեցաւ առաջին ներկայացման, եւ յաջորդ օրն դերասաններն կրկնապատկեցին տեղոյ գներն, եւ օրական երկու ներկայացում տուին: Այս ընդունելութիւնն տեւեց չորս ամիս:

Թատերախաղն դրկուեցաւ թագաւորին որ այդ պահուն Պիրենեան լեռներուն ստորոտն կը գտնուէր եւ արքունիքն կատարելապէս հաստատեց քաղաքացոց դատողութիւնն: Այս քանն ի հարկէ շատ ու շատ էր նախանձ եւ հակառակութիւն գրգռելու. այդպէս հեղինակն ամբաստանեցին ոնանք թէ նիւթը քաղել է Կիլօ Կորժիւի յիշատակներ գործէն, յիշատակներ, զորս թնել, է կ'ըսէին, սոյն հոյակաւոր երգիծաբանի այրիէն. ուրիշներն ալ թէ պարզապէս ընդօրինակել է Բիւռ երեցէն:

Արդէն, կ'ըսէ պ. Պազէն, իտալացի կատակերգակներ իրանց թեմի վրայ ներկայացրել էին Բիւռ—երեցի գրած մի խաղն իտալերէն լեզուաւ, սուտ ազնուութիւնը մակդիրով:

Թէ Մոլիէռ պէտք չէր ունեցած Բիւռ—երեցէն օրինակ առնելու, այդ մասին ամեն—ոք ապահով է բոլորովին. այլ սա կայ որ իր ժամանակի քարուց այդ մասին վրայ՝ զոր ինքն առաջինն համարձակած է շօշափել, մի ուրիշ ծաղրաբանութիւն կանխած չինի եւ իրանն քաջալերած:

ՅԱՌԱՋԱԲԱՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ

Շատ առտարոց բան է որ մի գործ կը տպագրեն, հակառակ հեղինակի կամքին: Ես այդ բոլորովին անարդար կը գտնեմ եւ ուրիշ ամեն գեղծման կը ներեմ ի բացառեալ սոյն գեղծումն:

Համեստ հեղինակ ձեւանալ եւ իմ կատակերգութիւնն արհամարելով գովաբանել չէ միտքս: Ամբողջ Փարիզն տարաժամ թշնամանած կը լինիմ ամբաստանելով որ կարողացած է ծափահարել մի թեթեւամիտ գործ. ըստորում այսպիսի գրուածքների բացարձակ դատաւորն հասարակութիւնն է, իմ կողմանէ անտեղութիւն կը լինէր ժխտել այն. եւ եթէ ներկայացումէն առաջ ամենագէշ գաղափարն ունէի իմ *կեղծ ազնուութիւն* ի մասին, այժմ ստիպուած եմ հաւատալ որ մի բան արժէ նա, քանի որ այնքան մարդիկ միաձայն լաւ խօսեցան նորա վրայ: Բայց որովհետեւ նորա մէջ նշմարուած վայելչութեանց մի մեծ մասն, կախումն ունի կիրարկութենէն եւ ձայնի դաշնակութիւնէն, ինձ հարկաւոր էր որ այս պայմաններէ չի զրկուէր ան. եւ նկատեցի որ ներկայացման ատեն նորա գտած

յաջողութիւնն այնքան լաւ էր, որ աւելին պահանջել չէր լինէր:

Կ'ասեմ թէ որոշած էի միմիայն հրազով ցոյց տալ գործս, որպէս զի ոչ ոք առիթ ունենայ այդ մասին եղած առածն ասել ինձ, եւ չէի փափաքեր որ Պուրպօնեան թատրոնէն պալատական դահլիճն ոսնուր գործս: Այսու հանդերձ չի յաջողեցայ առաջքն սառնել, եւ տհաճութիւն ունեցայ տեսնելու տպագրիչների ձեռքն ընկած իմ գործի մի ընդօրինակութիւնն՝ խաբէութեամբ ձեռք անցուած արտօնութեամբ հանդերձ:

Ի զուր գոչեցի, ո՞վ ժամանակ, ո՞վ բարք, ինձ ցոյց տուին կամ իմ գործն հրատարակելու եւ կամ դատավարելու անհրաժեշտութիւնն. եւ այս երկրորդ դժբաղտութիւնն առաջինէն աւելի վատ է:

Հարկ է ուրեմն ինքզինքս յանձնել հակատագրին եւ թոյլ տալ այն՝ զոր չպիտի համարձակէին ընել առանց ինձ:

Ասուած իմ, ի՞նչ տարօրինակ ձանձրոյթ է մի գիրք լոյս ընծայել առաջին անգամ մանաւանդ երբ հեղինակն նոր է:

Եթէ զոնէ միջոց թողէին՝ կարող կը լինէի ինքզինքս հաւաքել, եւ ձեռք առնել բոլոր այն նախազգուշութիւններն՝ զոր այս տեսակ պարագայից մէջ, սովոր են կատարել պարոն հեղինակներն, այժմ իմ համարուեսներս։

Բացի մի քանի ջոջերն, զորս յակամ այս իրենց՝ ձեռք կ'անցնէի ի պաշտպանութիւն իմ գործին, եւ իրանց ազատամտութիւնն կը շոյէի մի բազմաճոխ դրուատագրով, մի իմաստալից եւ սիրուն յառաջաբան եւս կը գրէի. եւ ինձ չեն պակսիր այն գրքեր՝ որոնք կը հայթայթեն ամեն պատշաճ բան՝ զոր կարելի է ասել ողբերգութեան նորա ծագման, սահմանների եւ ուրիշ մասանց վերաբերմամբ:

Կը խօսէի նաեւ բարեկամացս որոնք թատերախաղս յանձնարարելու համար չէին զլանար կամ Ֆրանսերէն կամ լատիներէն ոտանաւորներ: Ունիմ մի բարեկամ ալ որ նոյն իսկ յունարէն կը գովաբանէր զիս, եւ ամեն—ոք գիտէ թէ յունարէն դրուատագիրն՝ մի գրքի նախաբանի՝ հիանալի ազդեցութիւն ունի:

Եւ սակայն զիս մէջ տեղ հանեցին առանց միջոց տալու որ ինքզինքս հանչնամ եւ մինչեւ իսկ կարող չեմ արտօնութիւն ստանալ երկու բառ ասելու այս խաղիս նիւթի մասին՝ իմ գաղափարն արդարացնելու համար:

Կ'ուզէի յայտնել թէ իմ գործն առհասարակ համեստ եւ պատշաճ հեգնութեան սահմանի մէջ է. թէ ամենավսեմ բաներն իսկ ենթակայ են կեղծուելու անարգ կապիկների կողմէ, որոնք ծաղրուելու արժանի են. թէ ամեն կատարեալ բաների այդ ստոր կեղծողութիւնք՝ ամեն ժա-

մանակ նիւթ եղած են կատակերգութեան, եւ թէ նոյն այդ պատճառաւ ճշմարիտ զիտուններն եւ իսկական կտրիններն՝ դեռ չեն փորձուած վշտակրիլ, *Կատակերգութեան բժիշկ է* եւ *Հարիւրապետ է*. ոչ ալ նոյնպէս դատաւորներ, իշխաններ ու թագաւորներ՝ *Գրիվիլէն* կամ ուրիշ խաղեր տեսնելով՝ որոնք բեմին վրայ արտարոցաբար կը ձեւացնեն դատաւոր, իշխան կամ թագաւոր: Այսպէս ալ ճշմարիտ *ազնուութիւն* իրաւունք չ'ունին արտմտելու՝ երբ ներկայացուին *կեղծերն* որոնք վատ կը նմանեցնեն զիրանք:

Բայց վերջապէս, ինչպէս ըսի, ինձ թոյլ չեն տար շունչ առնել, եւ Պարոն դը Լիւյն, այդ խայլն ընելէ զիս կարգիլէ. թող ուրեմն այսպէս երթայ, քանի որ Աստուած այսպէս կամեցաւ:

ԺՈՒԽԻԷՔ

ԿԵՂԾ ԱԶՆՈՒՈՒՀԻՔ

ԱՆՁԻՆՔ

1. Լակրանժ } Մերժուած սիրահարներ
2. Տիւգրուազի }
2. Կօրժիպիւս, Պարզամիա քաղքենի
4. Մատրլօն, Կօրժիպիւսի աղջիկն } ԿԵՂԾ ԱԶՆՈՒՈՒՀԻՔ
5. Գաթօս ,, եղբօրաղջիկն }
6. Մառոթ, Սպասուհի կեղծ ազնուուհիների
7. Ալմանզոր, ծառայ ,, ,,
8. Տը Մասդարիյ մարքիզ, Սպասաւոր Լակրանժի
9. Դերկոմս Տ' Եօտրլէ ,, Տիւգրուազի
10. Երկու գահաւորակիններ
11. Դրացուհիք
12 Ջուզակահարներ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԼԱԿՐԱՆԺ, ՏԻԳՐՈՒԱԶԻ

Տիգրուազի

Տեր Լակրա՜նժ:

Լակրանժ

Ի՞նչ է:

Տիգրուազի

Մի քիչ ինձ նայէ, առանց ծիծաղելու:

Լակրանժ

Է՛, լաւ:

Տիգրուազի

Սա մեր այցելութեան ի՞նչ կ՛ըսէք: Արդեօք շատ զոհ եղա՞ք:

Լակրանժ

Ձեր կարծեօք, մեր երկուսն էլ, այդպէս լինելու տեղիք ունի՞նք:

Տիգրուազի

Ճիշտն ըսած, կատարելապէս ոչ:

Լակրանժ

Իմ մասին կը խոստովանիմ ձեզ, որ շատ գայթակղած եմ: Ըսէք, երբէք տեսնուա՞ծ է երկու գաւառացի թեթեւամիտ կանայք, որ նոցա չափ ճնշեցանան, եւ երկու անձինք որ մեզ չափ անպատուուած լինին: Հազիւ թէ կարողացան զիջանել մեզ պրոներ տալու: Այդքան

ականջի խօսիլ, այդքան հօրանջել, այդքան աչքեր շրփ-
շրփել, եւ այդքան անգամ հարցնել թէ ժամը քանի՞սն
է, ես բնաւ տեսած չեմ: Հազիւ թէ միմիայն «այո» կամ
«ոչ» կը պատասխանէին մեր խօսածներին: Վերջապէս
չէ՞ք ընդունիր, որ, եթէ մինչեւ իսկ աշխարհի յետին մար-
դիքն լինէիք, կարելի չէր որ մեզ հետ աւելի գէշ վար-
ուէին:

Տիգրուազի

Ինձ կը թուի թէ այդ բանէն շատ զգածուել էք:

Լակրանժ

Անշուշտ կ'զգածուիմ՝ եւ այնքան՝ որ կուզեմ այդ
յանդգնութեան համար վրէժս առնել: Գիտեմ ես մեր
արհամարուելու պատճառն: Ազնուամտութեան մթնոլոր-
տով ոչ միայն փարիզ վարակուած է, այլեւեւ տարա-
ծուած է նա գաւառներն, եւ ահա մեր թեթեւամիտ աղջը-
կունք մի մեծ մասն ծծել են: Մէկ խօսքով նոցա անձնա-
ւորութիւնն պչրանաց եւ ազնուամտութեան մի խառնուրդ
է: Ես գիտեմ թէ ինչ է հարկաւոր նոցա մօտ ընդունե-
լութեան համար. եւ եթէ ինձ կը վստահիք, երկուսս էլ
մի այնպիսի խաղ կը խաղանք, որ ցոյց տայ իրանց
տխմարութիւնն եւ սովորեցնէ որ մի քիչ աւելի լաւ
ճանչնան իրանց շրջապատն.

Տիգրուազի

Եւ այդ ի՞նչպէս:

Լակրանժ

Ես մի ծառայ ունեմ, Մասգարիյ անունով, որն
որ շատերի աչքին սրամիտ մարդու երեւոյթ ունի, վասն
զի այժմ սրամտութենէ աւելի արժան բան չկայ: Նա
մի անհեթեթ արարած է որ միտքը դրել է պատուաւոր
մարդ դառնայ: Սովորաբար կը պարծենայ սիրահարա-
կան եւ ոսանաւոր գրուածքներով, եւ միւս ծառաներն

կ'արհամարհէ, մինչեւ իսկ վայրի գազաններ գոչելով:

Տիգրուազի

Է, լաւ, անով ի՞նչ ընել է միտդ:

Լակրանժ

Թէ ի՞նչ ընել է մի՛տս: Պէտք է...: Բայց նախ այս
տեղէ դուրս ելնենք:

ՏԵՍԱՐԱՆ Բ:

ԿՕՐԺԻՊԻՍ, ՏԻԳՐՈՒԱԶԻ, ԼԱԿՐԱՆԺ

Կորժիպիս

Է լաւ, աղջիկս եւ եղբօր-աղջիկս տեսա՞ք: Գոր-
ծերն լաւ պիտի երթա՞ն: Այս այցելութեան արդիւնքն
ի՞նչ է:

Լակրանժ

Այդ այնպիսի մի բան է, զոր նոքա աւելի լաւ
կարող են հասկացնել ձեզ քան թէ մենք: Միմիայն սա
կարող ենք ըսել ձեզ որ երախտապարտ ենք ձեր բրած
շնորհին համար եւ մնամք Ձեր ամենախոնարհ ծա-
ռաներն:

Տիգրիւազի

Ձեր ամենախոնարհ ծառաներն:

Կորժիպիս (*Առանձին*)

Օհ, թուի թէ սոքա դժգոհ կը մեկնին ասկից: Ար-
դեօք ինչ՞ից կը յառաջանայ իրանց դժգոհութիւնն:
Պէտք է քիչ իմանալ թէ բանն ինչպէս է եղեր:

Հ.Ս.Խ.Հ. Հանրային Գրադարան
U.S.S.R. Public Library
7/XI-1922
1002
5393

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԿՕՐԺԻՊԻՍ, ՄԱՌՕՐ.

Մառօր

Ի՞նչ կը փափագիք պարոն:

Կորժիպիս

Ո՞ւր են ձեր տիրուհիք:

Մառօր

Իրանց խուցն:

Կորժիպիս

Ի՞նչ կ'ընեն:

Մառօր

Շրջունցներնուն բոմաս կը խեն:

Կորժիպիս

Այդքան բոմաս բաւ է, ըսէք որ իջնեն:

ՏԵՍԱՐԱՆ Դ.

Կորժիպիս *(Առանձին)*

Այդ անօրէններն իրանց բոմասով կարծեմ զիս կործանելու փափագ ունին: Ամեն կողմ միմիայն ձուի սպիտակուց, կուսական կաթ եւ հազար փուն ու մուն բաներ են տեսածս զորս երբէք չեմ հասկնար: Քանի այստեղ եկել եմ, առնուազն տասներկու խոզի ճարպ սպառեցին եւ գոթծածած ոչխարի ոտներով չորս ծառայք կարող էին ամեն օր կշտանալ:

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՄԱՏԹԼՕՆ, ԳԱԹՕՍ, ԿՕՐԺԻՊԻՍ.

Կորժիպիս

Ձեր դունչին ճարպելու համար արդարեւ այսքան ծախք շատ հարկաւոր են: Մի քիչ ըսէք ինձ՝ ի՞նչ ըրիք այս պարոններին որոնք կը տեսնեմ թէ այնքան սառնութեամբ կը մեկնին: Միթէ ես չի պատուիրե՞ցի ընդունել իբր այնպիսի անձնաւորութիւնք զորս ձեզ ամուսին տալ կուզեմ:

Մատթլօն

Եւ հայրիկ ի՞նչ յարգանք կուզէք որ ընէինք այդ մարդկանց՝ իրանց ապօրէն վարմունքին:

Գաթօս

Հնար կա՞յ, հօրեղբայր, որքիչ թէ շատ բանիմաց մի աղջիկ՝ կարենայ յարմարուիլ նոցա անձնաւորութեան:

Կորժիպիս

Եւ ի՞նչ գտաք չի հաւնելու:

Մատթլօն

Որքա՜ն գեղեցիկ էր իրանց սիրաբանութիւնն: Ի՞նչ, մի՞թէ նախ ամուսնութիւնի՞ց սկսելու է:

Կորժիպիս

Հապա ո՞ր տեղից կուզէիք որ սկսէին, հարնութիւնի՞ց: Այս չէ այն սկզբնաւորութիւնն զոր երկուսդ ալ պատճառ ունիք ինձմէ աւելի ջատագովելու: Ադկից աւելի հանոյալի ի՞նչ կայ: Իսկ այն նուիրական կապն զոր նոքա կը բաղձան՝ միթէ իրանց մտադրութեան պատուաւորութեանն հաւասի՞ չէ՞:

Մատթլօն

Ոհ, հայրիկ, այդ ձեր ըսածն յեսին խաղեցոյ բան

է: Կ'ամաչեմ ձեր այդպես խօսելն լսելով, եւ պէտք է որ դուք քիչ ընտելանաք իրերի գեղեցիկ եղանակներին:

Կորժիպիս

Ես ոչ եղանակ գիտեմ ոչ ալ երգ: Ես ձեզ կ'ըսեմ որ ամուսնութիւնը մի սուրբ եւ մի նուիրական բան է, եւ անով սկսելն՝ համեստ մարդու ընթացք է:

Մաքլօն

Ասուած իմ, եթէ ամեն մարդ ձեզ նմաներ, կեանքի վէպերն իսկոյն կը վերջանային: Ի՞նչ գեղեցիկ բան կը լիներ եթէ՝ նախ եւ առաջ Սիրիս ամուսնանար Մոնտանի հետ, եւ կամ Արօնս միամտաբար լծակցեր Գլէլի (*):

Կորժիպիս

Սա ի՞նչ կը պատմէ ինձ:

Մաքլօն

Հայր իմ, ահա իմ հօրեղբօր աղջիկս որ ինձմէ աւելի լաւ ձեզ ըսէ թէ, ամուսնութիւնը միմիայն ուրիշ արկածներէ յետոյ գալու է: Հարկ է որ սիրուհիւոյն, հանոյ լինելու համար, կարենայ արտայայտել գեղեցիկ ըզգացումներ, ներշնչել քաղցրութիւն, զորով եւ ցանկութիւն, եւ իր ընտրութիւններն ձեւաւոր լինելու են: Նախ եւ առաջ պէտք է որ, տաճարին մէջ, կամ պտոյտի ատեն եւ կամ ո եւ է հանրային հանդիսատեղի, տեսնէ նա այն անձն՝ որուն կրսիրահարուի, եւ կամ մի բարեկամի հետ դիպուածով գնացած լինի նորա տունն եւ անկից մեկնած երազուն եւ մելամաղձոտ: Մի ժամանակ կը ծածկէ իր ցանկութիւնն դէպի սիրած էակն, եւ սակայն նորա յանախ կտայ այցելութիւնք, որոնց միջոցին պէտք չէ որ մոռանայ մի վայելուչ խնդիր մէջ տեղ դնել որ

(*) Սիրիս եւ Մոնտան, Գլէլ եւ Արօնս, Օրիորդ Սգիւտէրի *Արքամէն* եւ Գլէլի վէպերի գլխաւոր անձինքն են:

ներկայից միտքն հրահանգէ: Կը հասնի յայտարարութեան օրն, որ ընդհանրապէս պէտք է ընել մի ո եւ է պարտեզի ծառուղիին մէջ, երբ ընկերք քիչ հեռացած են: Եւ այս յայտարարութեան կը յաջորդէ մի անմիջական վրդովում որուն նշանակն մեր կարմրիլն է, եւ սա՝ մի ժամանակ կը վտարէ սիրահարն մեր ներկայութենէ: Ապա նա միջոց կը գտնէ մեզ հանդարտեցնելու, եւ մեզ անզգալապէս վարժեցնելու իր տրփանքի ճառերին, եւ խլելու մեզմէ այն խոստումն որն այնքան դժուար է:

Սորանից յետոյ կգան արկածներն, հակառակորդներ, որոնք կը նետուին այդ հաստատուած մտերմութեան մէջ, ծնողների հալածանք, կեղծ երեւոյթների տակ յայտնի նախանձորդներ, գանգատ, յուսահատութիւն, առեւանգում եւ ինչ որ սորա հետեւանքն է:

Ահա թէ սիրուն եղանակաւ վարուելն ինչպէս է, եւ սոքա կանոններ են, զորս նշմարիս սիրաբանութեան մէջ, չէ կարելի զանց առնել:

Իսկ առաջն քայլին իսկոյն ամուսնական միութեան հասնել, հարսանեաց պայմանագիր կնքելով միայն սիրաբանել եւ իսկապէս հակառակ ծայրէն սկսել գործն, մի քիչ ալ յառաջ, հայր իմ, եւ այդ ընթացքը կը լինի ամենաստորինն: Եւ ես արդէն մէջ ցաւ կ'զգամ միայն նկատելով որ նոյնը ահա ինձ կը պատահի:

Կորժիպիս

Ի՞նչ արտառոց նաւ է լսածս: Ահա մի բարձր ոն:

Գարօն

Արդարեւ հօրեղբայր, իմ հօրեղբօր աղջիկն խընդիրը լաւ պարզեց: Հնա՞ր է միթէ վայելչապէս ընդունել այն անձինքն՝ որոնք բոլորովին անընդունակ են կենցաղագիտութեան: Գրաւ կը դնեմ որ նոքա բնաւ չեն

է: Կ'ամաչեմ ձեր այդպես խօսելն լսելով, եւ պէտք է որ դուք ինչ ընտելանաք իրերի գեղեցիկ եղանակներին:

Կորիպիւս

Ես ոչ եղանակ գիտեմ ոչ ալ երգ: Ես ձեզ կ'ըսեմ որ ամուսնութիւնը մի սուրբ եւ մի նուիրական բան է, եւ անով սկսելն՝ համեստ մարդու ընթացք է:

Մասրլօն

Ասուած իմ, եթէ ամեն մարդ ձեզ նմաներ, կեանքի վէպերն իսկոյն կը վերջանային: Ի՞նչ գեղեցիկ բան կը լիներ եթէ՝ նախ եւ առաջ Սիրիւս ամուսնանար Մոնտանի հետ, եւ կամ Արօնս միամտաբար լծակցեր Գլէլի (*):

Կորիպիւս

Սա ի՞նչ կը պատմէ ինձ:

Մասրլօն

Հայր իմ, անա իմ հօրեղբօր աղջիկս որ ինձմէ աւելի լաւ ձեզ ըսէ թէ, ամուսնութիւնը միմիայն ուրիշ արկածներէ յետոյ գալու է: Հարկ է որ սիրուհիս, հանոյ լինելու համար, կարենայ արտայայտել գեղեցիկ ըզգացումներ, ներշնչել քաղցրութիւն, զորով եւ ցանկութիւն, եւ իր ընտրութիւններն ձեւաւոր լինելու են: Նախ եւ առաջ պէտք է որ, տաճարին մէջ, կամ պտոյտի ատեն եւ կամ ո եւ է հանրային հանդիսատեղի, տեսնէ նա այն անձն՝ որուն կրսիրահարուի, եւ կամ մի բարեկամի հետ դիպուածով գնացած լինի նորա տունն եւ անկից մեկնած երազուն եւ մելամաղձոտ: Մի ժամանակ կը ծածկէ իր ցանկութիւնն դէպի սիրած էակն, եւ սակայն նրա յանախ կտայ այցելութիւնք, որոնց միջոցին պէտք չէ որ մոռանայ մի վայելուչ խնդիր մէջ տեղ դնել որ

(*) Սիրիւս եւ Մոնտան, Գլէլ եւ Արօնս, Օրիորդ Սգիւտերի *Արքամէն* եւ Գլէլի վէպերի գլխաւոր անձինքն են:

ներկայից միտքն հրահանգէ: Կը հասնի յայտարարութեան օրն, որ ընդհանրապէս պէտք է ընել մի ո եւ է պարտեզի ծառուղիին մէջ, երբ ընկերք միշ հեռացած են: Եւ այս յայտարարութեան կը յաջորդէ մի անմիջական վրդովում որուն նշանակն մեր կարմրիլն է, եւ սա՝ մի ժամանակ կը վտարէ սիրահարն մեր ներկայութենէ: Ապա նա միջոց կը գտնէ մեզ հանդարտեցնելու, եւ մեզ անզգալապէս վարժեցնելու իր տրփանքի հառերին, եւ խլելու մեզմէ այն խոստումն որն այնքան դժուար է:

Սորանից յետոյ կգան արկածներն, հակառակորդներ, որոնք կը նետուին այդ հաստատուած մտերմութեան մէջ, ծնողների հալածանք, կեղծ երեւոյթների տակ յայտնի նախանձորդներ, գանգատ, յուսահատութիւն, առեւանգում եւ ինչ որ սորա հետեւանքն է:

Անա թէ սիրուն եղանակաւ վարուելն ինչպէս է, եւ սոխ կանոններ են, զորս նշմարիս սիրաբանութեան մէջ, չէ կարելի զանց առնել:

Իսկ առաջ՝ն քայլին իսկոյն ամուսնական միութեան հասնել, հարսանեաց պայմանագիր կնքելով միայն սիրաբանել եւ իսկապէս հակառակ ծայրեն սկսել գործն, մի քիչ ալ յառաջ, հայր իմ, եւ այդ ընթացքը կը լինի ամենաստորինն: Եւ ես արդէն մէջ ցաւ կ'զգամ միայն նկատելով որ նոյնը անա ինձ կը պատահի:

Կորիպիւս

Ի՞նչ արտառոց ճառ է լսածս: Անա մի բարձր ոն:

Գարօն

Աւդարեւ հօրեղբայր, իմ հօրեղբօր աղջիկն խընդիրը լաւ պարզեց: Հնա՞ր է միթէ վայելչապէս ընդունել այն անձինքն՝ որոնք բոլորովին անընդունակ են կենցաղագիտութեան: Գրաւ կը դնեմ որ նոխ բնաւ չեն

տեսել ոչ *զգուաստուն*, ոչ *խաղցրագիր*, ոչ *փոքր-ուշ*, եւ նոյնպէս *սիրաբղթիկ*, *տուսիկ*, եւ *գեղանիւս հանգերգ* իրանց անձանօթ բաներ են: Մի՞թէ չէք նկատեր որ իրանց ամբողջ անձը այդ ցոյց կտայ: Եւ երբէք չ'ունին այն շարժումն որ մարդկանց մասին նախ լաւ գաղափար յառաջ կը բերէ: Սիրային այցելութեան գալ ուղղածիգ սրունգներով, անփեսուր գլխարկով եւ ժանեակէ զուրկ զգեստներով. ծամերն ալ խառնաշփոթ. Ասուա՛ծ իմ, ինչպի՞սի սիրահարներ են սոքա: Որքա՞ն պարզ հագնուածք, եւ ինչքա՞ն չոր ու ցամաք խօսակցութիւն: Երբէք հնար չէ հանդուրժել եւ հեռեւիլ իրանց խօսքերին: Նկատեցի նաեւ որ իրանց փողկապներն լաւ կապուած չեն եւ զստապաններուն մէջ դեռ մի կէս մեծ ոս կը մնէր, այնքան լայն են:

Կորժիպիւս

Կարծեմ թէ երկուսն ալ խենթեցեր են, եւ այս բարբանջանքէ ոչինչ կը հասկնամ: Գաթօս, եւ դուք Մասրլօն...

Մասրլօն

Ո՛հ, խնդրեմ հայրիկ, թողէք այդ տարօրինակ անուններն եւ ուրիշ կերպ կոչեցէք մեզ:

Կորժիպիւս

Ի՞նչպէս թէ այդ տարօրինակ անուններ: Մի՞թէ ձեր մկրտութեան անունները չեն նոքա:

Մասրլօն

Ասուած իմ որքան պարզամիտ էք: Իմ մի զարմանքն ալ սա է թէ, դուք ինչպէ՞ս կարողացած էք ունենալ ինձ նման փափկազգաց մի աղջիկ: Նուրբ ոգի մէջ լսուա՞ծ է երբէք Գաթօս, Մասրլօն, եւ միթէ չէ՞ք ընդունիր որ այդ անունների մին կը բաւէ աշխարհի ամենագեղեցիկ եակն սորնացնելու:

Գաթօս

Ճիշտ է, հարեղբայր, մի քիչ փափուկ ականջն կը տանջուի այդ անունների արտասանուիլն լսելով: Բոլիքսեն անունն զոր ընտրել է հարեղբօր աղջիկս, եւ Ամենքորն ես ինձ համար որոշած եմ այնքան շնորհալի են որ դուք պարտաւոր էք ընդունել:

Կորժիպիւս

Լսեցէք, մի խօսք ունիմ ձեզ ասելու. Ես երբէք չեմ կամենար որ դուք ուրիշ անուն կրէք քան ինչ որ ձեզ տրուած է ձեր կնքահօր եւ կնքամօր կողմանէ, եւ այն պարոններն, որոնք խնդրոյ առարկայ են, ես կը հանչնամ նոցա գերդասանուններն եւ կարողութիւնն, եւ վրնռապես կ'ուզեմ որ դուք պատրաստուիք ընդունել զիրենք իբր ամուսիններ: Ես հոգնել եմ ձեզ իմ ուսերի վրայ ունենալէ, եւ իմ տարիքն ունեցող մարդու համար երկաւ աղջկանց պաշտպանութիւնն շատ ծանր բեռ է:

Գաթօս

Իմ մասին, հարեղբայր, միայն սա կարող եմ ասել թէ, ես ամուսնութիւնն կը նկատեմ մի կատարելապէս դժնդակ բան. ի՞նչպէս կարելի է մտածել մի ճշմարտապէս մերկ մարդու... լծակցելու վրայ:

Մասրլօն

Համբերեցէք քիչ շունչ առնենք Փարիզի բարձր շրջաններն՝ ուր հազիւ թէ հասանք: Թոյլ տուէք մեզ հանդարտ կազմել մեր վէպի հիւսուածքն, եւ այդքան մի փութացնէք վախնանը:

Կորժիպիւս (*մեկուսի*)

Բնաւ կասկած չկայ, սոքա ամենակատարեալ են: (բարձր) Կրկին ասեմ որ ես բան չեմ հասկնար բոլոր այդ սնոտաբանութենէ. ես կ'ուզեմ բացարձակ տեր լի-

նել, եւ վերջ դնելու համար ամեն տեսակ հաւերի՝ պէտք է որ երկուսդ ալ կամ ամուսնանաք շուտով եւ կամ, հաւատացէք, կրօնաւոր դառնաք, կ'երդնում ձեզ:

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԳԱԹՕՍ — ՄԱՏԸԼՕՆ

Գաթօս

Ասուած իմ. սիրելիս, հայրդ խնդրոյն խորն թափանցած լինելու երեւոյթ ունի: Հասկացողութիւնն որքա՞ն թանձր է, եւ հոգին որքա՞ն խաւար:

Մատլօն

Ինչ ընենք սիրելիս ես դորա համար կասկածանաց մէջ եմ: Դժուարաւ կը հաւատամ որ ես իսկապէս իր աղջիկն եմ եւ կարծեմ որ մի օր ո՞ ես է դիպուած երեւան պիտի հանէ թէ ես աւելի ազնուական ծագում ունիմ:

Գաթօս

Կը հաւատամ, այո՛, ամեն երեւոյթներն կան արդէն, եւ իմ մասիս, երբ կը տեսնեմ ինքզինքս...

ՏԵՍԱՐԱՆ Է.

ԳԱԹՕՍ, ՄԱՏԸԼՕՆ, ՄԱՔՕՔ

Մառօք

Մի ծառայ ահա կը հարցնէ թէ տա՞նն է, եւ կ'ըսէ որ իւր տէրն կուզէ գալ ձեզ տեսնել:

Մատլօն

Սովորէ, խե՛նք, մի փիչ նուազ կոշտութեամբ բա-

ցատրելու. ըսէ, ահա մի ենթակայ որ կը հարցնէ թէ արդե՞օք երեւնալու բարեդէպութեան մէ՞ջ է:

Մառօք

Հրմ, ես լատիներէն երբէք չգիտեմ, եւ ձեզ պէս ի մեծ-Սիրն *փիլիսոփութիւն* սովորած չեմ:

Մատլօն

Լիրբ, ինչպէ՞ս հանդուրժել սորան. եւ ո՞վ է այդ ծառայի տէրն:

Մառօք

Մարիզ տը Մասգարիյ ըսաւ ինձ:

Մատլօն

Ոհ, սիրելիս մի մարիզ, մի մարիզ: Այո՛ զնացէք ըսէք թէ կարող է մեզ տեսնել: Այդ անշուշտ մի լաւ գլուխ է որ մեր մասին խօսուիլն լսել է:

Գաթօս

Անկասկած, սիրելիս:

Մատլօն

Հարկ է ընդունել զինքն աւելի այս ներքեւի սրահն քան թէ մեր սենեակն: Դոնէ մեր ծամերն փիչ կարգի դնենք, եւ արդարացնենք մեր համբաւը: Շուտ այստեղ եկէք, վարագոյրների կրկնոցներն կախեցէք ներսը:

Մառօք

Հաւատայ գլուխս չի մտներ, թէ ի՞նչ բան է այդ, մարդավարի խօսեցէք ինձ հետ էթէ կ'ուզէք որ ձեզ հասկնամ:

Գաթօս

Հայելին բեր մեզ, ի՞նչ տխմար ես. եւ զգուշացիր որ դէմդիդ արտացոլումովն ապակին չ'ապականուի:

(*Դուրս կ'երթան*):

ՏԵՍԱՐԱՆ Ը.

ՄԱՍԳԱՐԻՅ, ԵՐԿՈՒ ԳԱՀԱՒՈՐԱԿԻՐՔ

Մասգարիյ

Բա՛ւ է, գահաւորակիրք, բաւ է: Այնտեղ, այնտեղ, այնտեղ, այնտեղ: Կարծեմ այս սահակներն միտ ունին զիս ջախջախել, պատին ու սալարկին բաղխելով: (*)

Առաջին գահաւորակիր.

Օհ, պատճառն այն է որ դուռը նեղ է: Իսկ դուք պահանջեցիք որ մինչեւ այստեղ հասնինք:

Մասգարիյ

Այդ գիտեմ. անպիտաններ. կուզէիք որ փեսուրներիս թարմութիւնը անձրեւոց օդի դժնդակութեան ենթարկէի, եւ կոշիկներս ցեխոտեի: Կորէք, վերցրէք այստեղէ ձեր գահաւորակն.

Երկրորդ գահաւորակիր.

Հանեցէք ուրեմն վնարել, պարոն:

Մասգարիյ

Հը:

Երկրորդ գահաւորակիր

Կ'ըսեմ թէ հանեցէք մեզ դրամ տալ, պարոն:

Մասգարիյ *(նրա մի ապտակ տալով)*

Ի՞նչպէս, արիկայ. իմ ասիճանի մարդէ, դրամ պահանջե՞լ:

Երկրորդ գահաւորակիր.

Խեղճ մարդկանց միթէ՞ այսպէ՞ս կը վնարեն, եւ ձեր ասիճանն մեզ կը կշտացնէ՞:

(*) Նոյն ինքն Մոլիէռ խաղացած է Մասգարիյի դերն:

Մասգարիյ

Ախ, ախ, ախ, ես ձեզ կը սովրեցնեմ ձեր չափը: Սա սահակներն կը համարձակին խաղալ ինձ հետ:

Առաջին գահաւորակիր.

(Գահաւորակի մի թեւն առնելով). Սա կը տեսնէ՞ք, վիարեցէք իսկոյն:

Մասգարիյ

Ի՞նչ բան:

Առաջին գահաւորակիր.

Կ'ըսեմ թէ դրամս կուզեմ ստանալ անմիջապէս:

Մասգարիյ

Սա, իրաւունք ունի:

Առաջին գահաւորակիր.

Շուտ, շուտ:

Մասգարիյ

Գլխուս վրայ, դու խօսելու ձեւն գիտես, բայց միւսն մի արիկայ է որ ըսածն չգիտէ: Ստացիր, գո՞հ ես:

Առաջին գահաւորակիր.

Ոչ, գոհ չեմ, դուք ընկերոջս մի ապտակ տուիք եւ... *(վերցնելով գահաւորակի թեւն)*:

Մասգարիյ

Կամաց. ստացիր ահա ապտակին փոխարէն: Մարդ ինձմէ ամեն բան կրնայ երբ այսպէս վայելուչ կերպով վարուի: Գնացէք, երբեմն եկէք զիս տանել Լուվր երեկոյին:

ՏԵՍԱՐԱՆ Թ.

Մ Ա Ռ Օ Թ—Մ Ա Ս Գ Ա Ր Ի Յ

Մառօթ

Պարոն, ահա իմ տիրուհիս, շուտով կըգան:

Մասգարիյ

Թող բնաւ չ'ահապարեն. ես այսեղ հանգիստ տեղաւորուած կը սպասեմ:

Մառօթ

Ահա, նոքա են:

ՏԵՍԱՐԱՆ Ժ.

ՄԱՏԼՈՕՆ, ԳԱԹՕՍ, ՄԱՍԳԱՐԻՅ ԵՒ ԱԼՄԱՆԶՕՐ

Մասգարիյ

(*Բարեւեկիցեսոյ*). Օրիորդներ, իմ յանդուգն այցելութիւնն անշուշտ ձեզ անակընկալ է: Բայց այս անախորժութեան պատճառն ձեր հոչակն է, եւ արժանիքն ինձ համար այնքան զօրաւոր հրապոյր ունի՝ որ ամեն տեղ նրա ետեւեն կը վազեմ:

Մատլօն

Եթե արժանիքի կը հետապնդէք, մեզ մօտ չէ զայն որոնելու տեղն:

Գաթօս

Արժանիքն մեզ մօտ գտնելու համար, հարկ պիտի լիներ որ դուք ձեզ հետ բերէիք զայն:

Մասգարիյ

Ահ, ձեր խօսքերի առաջք ես կ'անցնիմ: Հռչակը նիշտ կապացուցանէ ինչ որ դուք կ'արժէք, եւ դուք պիտի յաղթէք, յաղթահարէք Փարիզի ամենեն նրբակեցցաղներին իսկ:

Մատլօն

Հանոյակատարութիւնն մի քիչ աւելի յառաջ կը մղէ ձեր զովեստներին սահմանն եւ ես ու իմ քոյրերս աղջիկն, ուշադիր չենք լրջութեամբ վերաբերուելու դէպի ձեր շողոքորթութեանց քաղցրութիւնը:

Գաթօս

Սիրելիս, հարկ էր աթոռ բերել տալ:

Մատլօն

Հա, Ալմանզօր:

Ալմանզօր

Հրամայեցէք օրիորդ:

Մատլօն

Շուտ հոգացէք մեր խօսակցութեան հանգստաւէտութեանն պէտքերն:

Մասգարիյ

Սակայն, այսեղ գոնէ ինձ համար ապահովութիւն կա՞յ արդեօք:

(*Ալմանզօր դուրս կ'երթայ*)

Գաթօս

Ի՞նչէ կը վախնամ:

Մասգարիյ

Սրտիս գողցուելէն, անկախութեանս ո եւ է բռնաբարումէ: Այսեղ կը նշմարեմ աչքեր որոնք շատ չար տղու երեւոյթ ունին. եւ համարձակութիւնն կը ծաղրեն եւ հոգիների հետ չարաչար կը վարուին: Ի՞նչպէս, նախ երբ մարդ նոցա մօտենայ, եղեռնական դարանակալութեան կը մտնեն: Ոհ, հաւատացէք, կը կասկածիմ, հետի ոտն խոյս կուտամ, թէ չէ պատուաւոր ապահովութիւն կը պահանջեմ ո՛ր այդ աչքեր ինձ երբէք չարիք չպիտի ընեն:

Մաքլօն

Սիրելի ընկերուհիս, ի՞նչ զուարթ բնաւորութիւն ունի:

Գաբօն

Կը տեսնեմ որ սա զուարթութեան մի տիպ է:

Մաքլօն

Ոչ մի բանէ մի վախնամ. մեր աչքերն բնաւ չար դիտում չ՚ունին, եւ ձեր սիրտն թող հանգիստ ննջէ իր հանդարտութեան մէջ:

Գաբօն

Բայց շնորհ ըրէք պարոն. այդքան անողոք մի լինիք դէպի սա բազկաթոռն որ թեւերն ձեզ կ՚ընծայէ մի քառորդ ժամէ ի վեր: Քիչ գոհացրէք ձեզ գրկելու բաղձանքն:

Մասգարիյ

(*Ծամերն ուղղէլէ եւ ինքզինք յարդարէլէ վերջ*) Է՜ լաւ, Օրիորդներ, Փարիզն ի՞նչպէս կը գտնէք:

Մաքլօն

Աւաղ, այդ մասին ի՞նչ կարող ենք ըսել: Ճշմարտութեան հակառակորդներ կը լինինք եթէ չի խոստովանինք թէ Փարիզ մեծ հրաշալիքներու ատեանն է, գեղեցիկ հաշակի, բարձր մտքերի, եւ նուրբ կենցաղի կեդրոնն է:

Մասգարիյ

Իմ մասին, կը պնդեմ որ Փարիզէ դուրս պարկեշտ մարդկանց հանգիստ չկայ բնաւ:

Գաբօն

Դա անվիճելի ճշմարտութիւն է:

Մասգարիյ

Քիչ ցեխոտ է, բայց գահաւորակ կայ:

Մաքլօն

Ճշմարիտ որ գահաւորակն ցեխի եւ վատ օդի անյարմարութեանց դէմ մի հիանալի պատսպարան է:

Մասգարիյ

Շատ այցելուներ կ՚ընդունի՞ք արդեօք, ինչքա՞ն հարտարամիտ էք:

Մաքլօն

Աւաղ, դեռ անծանօթ ենք. բայց ծանօթանալու վրայ ենք. եւ մի մասնաւոր բարեկամուհի ունինք, որ մեզ խոստացաւ այստեղ բերել պարոնների հատընտիր հաւաքածոն:

Գաբօն

Եւ մի քանի ուրիշներն որոնց մասին ըսած են մեզ թէ գեղեցիկ իրերի գերագոյն դատաւորներն են:

Մասգարիյ

Ինձմէ աւելի ոչոք կարող է լաւ կատարել ձեր գործը, ամենքն ալ ինձ այցելութեան կգան. եւ կրնամ ըսել ձեզ որ միշտ, երբ կ՚արթնամ՝ մի կէս երկոտասնեակ տաղանդներ կան դռան:

Մաքլօն

Ոհ, Աստուած իմ, ի խորոց սրտէ երախտապարտ կը լինինք ձեզ, եթէ այդ բարեկամութիւնն ընէք մեզ. վասնզի հարկ է վերջապէս ծանօթանալ բոլոր այդ պարոնների, երբ մարդ զարգացած շրջանի պատկանիլ կուզէ: Նոքա միայն կարող են Փարիզ մեզ հռչակ տալ, եւ գիտէք կան նոցա մէջ այնպիսիք՝ որոնց միմիայն յանախակի երթեւեկն հարկաւոր է՝ մարդուս բանիմացի համբաւ ստանալու համար երբ աւելին ընել հնար չէ:

Այլ իմ մասին, ես մասնաւորապէս կը նկատեմ որ, այդ շահեկան այցելութիւնների միջոցաւ, մարդ կը ծա-

ճօթանայ հարիւրաւոր բաների, զորս անհրաժեշտ է գիտնալ, եւ որոնք գեղեցիկ հանճարի տարրերն են: Այդպէսով մարդ կը տեղեկանայ ամեն օր սիրաբանական փոքրիկ լուրերի, արձակ եւ յանգաւոր գրուածքների փոխանակութեան: Մարդ նիշտ ժամանակին կ'իմանայ որ այսինչն աշխարհիս ամենասիրուն խաղն գրել է, այն ինչ նիւթի վրայ. այս ինչ կինն այն ինչ երգի բառերն շարադրել է. սա՝ մի յաջողութեան առթիւ բանաստեղծութիւն հեղինակել է. միւսն անհաւատարմութեան վրայ տաղեր յօրինել է, պարոն այնինչն, երէկ երեկոյ մի *վէպակ* գրել է օրիորդ այսինչին, որն պատասխան ղրկել է այս առաւօտ ժամ 8-ին. այսինչ հեղինակը մի ո եւ է նիւթ յղացել է. միւսը իր վէպի երրորդ մասին հասել է. մէկն ալ իր գործերն մամուլի յանձնել է: Սոքա են որ ընկերութեան մէջ մարդուս արժանիք կտան եւ եթէ մարդ այս բաներին անտեղեակ է, ունեցած ամբողջ հանճարին մի սու չեմ տար:

Դարձ

Արդարեւ, ես կ'ենթադրեմ որ ինքզինքն խելացի կարծող մի մարդ շատ ծաղրելի կը դառնայ երբ մինչեւ իսկ չգիտէ այն փոքրիկ քառեակներն որ ամեն օր կը յօրինուին. եւ ես իմ մասին չափազանց կը կարմրեի եթէ երբէք գային ինձ հարցնել թէ կրկին տեսե՞լ եմ այն՝ որ ես դեռ չեմ տեսած:

Մասգարիյ

Ճշմարիտ ամօթալի է չ'ունենալ եղած բաների առաջին օրինակներն. բայց դուք մի նեղուիք, ես ձեզ մոտ կը կազմեմ հանճարների մի կահաւ, եւ կը խոստանամ որ դուք արդէն անգիր սովրիք ամենեն առաջ՝ Փարիզի ամենափոքր յանգաւորներն իսկ: Ես ինքս, ինչպէս որ կը

տեսնէք, երբ ցանկանամ քիչ կը հեռեւիմ, եւ պիտի նըկատէք որ Փարիզի առաջնակարգ ճնշասենեակների մէջ կը շրջին, իմ ոնով երկու հարիւր երգեր, մի նոյնքան էլ հնչեակներ, չորս հարիւր երգիծականներ եւ հազարից աւել քնարերգեր, չի հաշուած հանելուկներն եւ պատկերները:

Մաքլօն

Կը խոստովանիմ որ ես պատկերների բուռն սիրող եմ, եւ անոնցմէ աւելի շնորհալի բան չկայ:

Մասգարիյ

Պատկերներն դժուարին են եւ խորին միտք կը պահանջեն: Եթէ իմ ոնով գրուածներն տեսնէք՝ անշուշտ պիտի հաւանիք:

Դարձ

Գալով ինձ, ես չափազանց կը սիրեմ հանելուկներն:

Մասգարիյ

Այդ՝ միտքը կը հրահանգէ, եւ ես այս առաւօտ չորս հատ շինեցի, զորս ձեզ կտամ որ լուծէք:

Մաքլօն

Քնարերգերն հանոյալի են եթէ լաւ դարձուած լինեն:

Մասգարիյ

Դա իմ մասնաւոր տաղանդն է, եւ կ'աշխատիմ ամբողջ Հռովմէական պատմութիւնն քնարերգի վերածել:

Մաքլօն

Ոչ, այդ անշուշտ չափազանց սիրուն բան կը լինի. գոնէ մի օրինակ կ'ունենամ եթէ տպագրել տաք:

Մասգարիյ

Ես ձեր երկուսին ալ մէկ մէկ օրինակ կը խոստանամ, եւ լաւ կազմուած: Այս իմ պարտականութենէ դուրս է, բայց այդ ալ կ'ընեմ՝ շահեցնելու համար գրավաճառներին՝ որոնք զիս կը հալածեն:

Մասբլօն

Կ'երեւակայեմ որ իր գործի հրատարակուիլն տեսնելն մեծ հանոյք լինելու է:

Մասգարիյ

Անկասկած: Բայց լաւ յիշեցի, ձեզ ըսեմ մի *Էմբրօմբրիւ* զոր երեկ բարեկամս հիներէս մի դխուհիւոյ մօս կազմեցի այցելութեանս ատեն. վասն զի ես չափազանց յաջողակ եմ *Էմբրօմբրիւի* մեջ:

Գարօս

Էմբրօմբրիւն մտքի ճիշտ փորձաքարն է:

Մասգարիյ

Մտիկ ըրէք ուրեմն:

Մասբլօն

Մեր բոլոր ականջներն սրած ենք:

Մասգարիյ

Ոհ, ոհ, բնաւ ուշադիր չեք
Մինչ ձեզ դիտէի բոլորովին անկասկած
Սիրտս խլեր է ձեր աչքն գաղտնայած
Հասէք գող կայ, գող կայ, գող կայ:

Գարօս

Ոհ, Աստուած իմ, ահա մեկն, որ կնահանութեան ծուծն հանել է:

Մասգարիյ

Ես ինչ որ յօրինեմ միշտ ասպէտական է. ամենեւին պատուելի չի հոտիր:

Մասբլօն

Պատուելիական լինելէ՞ երկու հազար մղոն հեռի է դա:

Մասգարիյ

Ուշադիր եղա՞ք սա սկզբնաւորութեանն. *ոհ, ոհ,* ահա անօրինակ բանն, *ոհ, ոհ, ոհ,* կարծես մարդն յանկարծ ուշաբերուած է, *ոհ, ոհ:* Անակնկալ, *ոհ, ոհ:*

Մասբլօն

Այո այդ *ոհ, ոհ*ը ես հիանալի կը գտնեմ:

Մասգարիյ

Կարծես թէ սա ոչինչ է:

Գարօս

Ոհ Աստուած իմ, այդ ի՞նչ կ'ըսէք: Դոխա այնպիսի բաներ են որ գին չ'ունին:

Մասբլօն

Տարակոյս չկայ, եւ ես աւելի կը ցանկայի մի այդպիսի ոհ, ոհ շինել, քան թէ մի դիւցազնական ֆերբուած:

Մասգարիյ

Աստուած իմ, ձեր ճաշակն ո՞րքան լաւ է:

Մասբլօն

Հրմ, ճաշակս շատ ալ վատ չէ:

Մասգարիյ

Բայց չէ՞ք հիանար նաեւ *ուշադիր չէի* բառերին. *ուշադիր* չէի, ես այդ չեի նշմարած, խօսելու մի բնական ձեւ է սա. *ուշադիր չէի. մինչ բոլորովին անկասկած,*—այսինքն, մինչ միամտաբար, առանց խորամանկութեան, մի խեղճուկ գառնուկի նման: *Ձեզ դիտէի,* այսինքն կը գոհանամ ձեզ նայելով, կը հիանամ, կը հրապուրուիմ. *ձեր աչքն գաղտնայած.* Այս *գաղտնայած* բառն ինչպէ՞ս կը թուի ձեզ, արդեօք լաւ ընտրուած չէ՞:

Գարօս

Կատարելապէս լաւ:

Մասգարիյ

Գաղտնայած, ծածուկ, կարծես կատուն մի մուկ որսալ կգայ, գաղտնայած:

Մասբլօն

Ադկից աւելի լաւն չլինիր:

Մասգարիյ

Սիրտս խլեր է, ինձմէ տարել է, յափշտակել է: *Գող կայ, գող կայ, գող կայ, գող կայ:* Պիտի կարծէիք որ մի մարդ կը ճչէ եւ գողի հետեւ կը հեռապնդէ ձերբակալել տալու համար: *Գող կայ. գող կայ, գող կայ, գող կայ:*

Մասբլօն

Հարկ է խոստովանիլ որ սա մի սրամիտ եւ նուրբ դարձուածք է:

Մասգարիյ

Հիմակ ձեզ ըսեմ սորա վրայ իմ շինած եղանակն:

Գարօս

Դուք երաժշտութի՞ւն էլ սովրած էք:

Մասգարիյ

Ե՞ս, ոչ երբէք:

Գարօս

Ուրեմն ի՞նչպէս կարելի է այդ:

Մասգարիյ

Նշանաւոր մարդիկ ամեն բան գիտեն առանց երբէք ոչինչ սովրելու:

Մասբլօն

Ապահովապէս, սիրելի ընկերուհիս:

Մասգարիյ

Մտիկ ըրէք, տեսնենք եղանակս ձեր ճաշակին յարմա՞ր է. *հրմ, հրմ, ղա, ղա, ղա, ղա, ղա:* Դժնդակ օդն սոսկալի կերպով խանգարել է ձայնիս փափկութիւնն.

բայց ի՛նչ հոգս, այս ալ՝ ասպեսական է: (*Կ'երգէ*)

Ոհ, ոհ, բնաւ ուշադիր չէի եւայլն:

Գարօս

Ոհ, մի կատարելապէս յուզիչ եղանակ: Արդեօք դա մարդ չի՞ մեռցներ:

Մասբլօն

Բոլորս կայ մեջն:

Մասգարիյ

Միտքը լաւ արտայայտուած չէ՞ք գտներ եղանակին մէջ: *Գող կայ, գող կայ.* եւ ապա իբր թէ մարդ աւելի բարձր գոչէ *գո գո գո գո գող կայ* եւ մի ապտակուած մարդու նման յանկարծ *գող կայ::*

Մասբլօն

Այս կը նշանակէ գիտնալ իրերի նրբութիւնն, մեծ նրբութիւնն, նրբութեանց նրբութիւնն: Ամենին հրաշալի է, հաւատացէք: Թէ եղանակին եւ թէ խօսքերին կը հիանամ:

Գարօս

Ես այդքան զօրաւոր բան դեռ չէի տեսել:

Մասգարիյ

Ես ինչ որ ընեմ բնատուր է, առանց ո եւ է ուսումնասիրութեան:

Մասբլօն

Բնութիւնն կարոգին մօր պէս վարուել է ձեզ հետ, եւ դուք իր շփացած զաւակն եղել էք:

Մասգարիյ

Ինչո՞վ կ'անցնէք ձեր ժամանակն, օրիորդներ:

Գարօս

Բոլորովին ոչինչով:

Մասլոն

Մինչեւ այժմ զուարճութեանց մի անուելի պանիի մէջ էինք:

Մասգարիյ

Կ'առաջարկեմ այս օրերս ձեզ տանել կատակերգական թատրոնն, եթէ կը կամենամ: Մանաւանդ որ մի նոր կատագերգութիւն պէտք է խաղան զոր ես շատ գոհ կը լինեի որ իմիասին տեսնէինք:

Մասլոն

Մերժուելու բան չէ դա:

Մասգարիյ

Բայց այնտեղ որ լինինք խնդրեմ որ պէտք եղածին պէս ծափահարէք. վասն զի յանձն առել եմ խաղին արժանիքն հասատել եւ հեղինակն այս առաւօս եկաւ այդ խնդրեց: Այսքեղի սովորութիւնն է որ հեղինակներն կը բերեն կը կարդան մեզ, ազդեցիկ մարդկանցս, իրենց նոր գործերն, որպէսզի պարտաւորեցնեն մեզ հաւանել եւ հաչակ տալ, եւ այժմ մտածեցէք երբ մենք մի բան ասենք, գեղեցարկը կը համարձակի՞ երբեմ հակառակիլ: Ես ինքս շատ ճշտապահ եմ. եւ երբ մի ո եւ է բանաստեղծի խոսանամ, միշտ կը գոչեմ, *Ահա այս է գեղեցիկ գործն, աղջուն մոմեր վառեցէք:*

Մասլոն

Ալ մի խոսիք. Փարիզ հիանալի տեղ է. ամեն օր հարիւր բան տեղի կունենայ, որ մարդ որքան ալ սրամիտ լինի, գաւառներն չէ կարող գիտնալ:

Դարոս

Կը բաւէ. բանի որ մենք ալ զարգացած ենք պէտք եղածին պէս կը կատարենք մեր պարտականութիւնն՝ ծափահարելու՝ ինչ որ յանձնարարեն:

Մասգարիյ

Զգիտեմ արդեօք կը սխալի՞մ. բայց կը թուի թէ դուք մի կատակերգութիւն յօրինած լինելու էք:

Մասլոն

Էն, կարելի է որ ձեր ըսածին նման մի բան եղած լինի:

Մասգարիյ

Ոն հաւատացէք, պէտք է որ մենք տեսնենք ան: Խոսքը մեր մէջ, մի հատ շինած եմ զոր կուզեմ ներկայացնել տալ:

Դարոս

Է, ո՞ր կատակերգակների պիտի յանձնէք:

Մասգարիյ

Լաւ հարցում, Պուրկոնեան թատրոնի, միայն հոգա կարող են մի գործի արժանիքն ցոյց տալ. միւսներն տրգեսներ են, որ կը կրկնեն ինչ որ լսեն: Զգիտեն յանգերգներն հնչեցնել եւ կանգ առնել գեղանիւս մասերի վրայ. ինչ միջոց կը մնայ իմանալու՝ թէ յանգերգի սիրուն կէտն որտեղ է, երբ կատակերգակն կանգ չի առներ, եւ մեզ չի հասկացներ թէ պէտք է աղաղակ բարձրացնենք:

Դարոս

Արդարեւ մի գործի գեղեցկութիւնն ունկնդիրներին զգացնելու ձեւը կայ եւ ամեն բան այնքան կ'արժէ որքան գնահատել տուի:

Մասգարիյ

Փեսրազարդս ի՞նչպէս կ'երեւի ձեզ. զգեստներուս պատշաճած կը գտնէ՞ք:

Դարոս

Կատարելապէս:

Մասգարիյ

Ժանեակս լաւ ընտրուա՞ծ է:

Մաքլօն

Գերազանցապէս լաւ: Իսկապէս վերջին նորաձեւութեան կը պատկանի:

Մասգարիյ

Ի՞նչ կ'ըսէք սուրնգակապերիս:

Մաքլօն

Կատարելապէս ձեւաւոր են:

Մասգարիյ

Կարող եմ գոնէ պարծենալ որ սոխա ուրիշների ունեցածներէ շատ գերազանց են:

Մաքլօն

Հարկ է խոստովանիլ որ այսքան բարձր նրբութեամբ յարդարում երբէք չեմ տեսել:

Մասգարիյ

Մի քիչ սա ձեռնոցներին ուղղեցէք ձեր հոտոտելեաց շառաւիղներն:

Մաքլօն

Զափազանց լաւ կը բուրեն:

Դարօս

Այսքան լաւ բաղադրուած անուշահոտութիւնն բրնաւ չեմ շնչած:

Մասգարիյ

Իսկ սա՞ (*կեղծամերի փոշոտած մազերն կտայ որ հոտոտեն*):

Մաքլօն

Ճշմարիտ լաւ տեսակն է. անուշահոտութիւնն լաւ տարածուել է վերեւն:

Մասգարիյ

Փեսուրներիս մասին բան չէք խօսիր: Ի՞նչպէս են:

Դարօս

Զափազանց սիրուն:

Մասգարիյ

Գիտէ՞ք, մէկ ճիւղն մէկ ոսկի արժէ: Ես ընդհանրապէս լաւագոյն բաներն գործածելու մոլութիւնն ունիմ:

Մաքլօն

Կը վստահանամ որ դուք եւ ես նոյն գաղափարն ունինք. իմ կրած բոլոր բաների համար ամենանուրբ պահանջկոտութիւնն ունիմ: Եւ չեմ կարող հանդուրժել որ մինչեւ իսկ զանգպանները լաւ գործուած չլինին:

Մասգարիյ

(*Յանկարծ պոռալով*)

Վայ, վայ, վայ, կամաց: Օրիորդներ, վկայ Աստուած, այդ խիստ վատ զեղծում է. ես կը բողոքեմ ձեր վարմունքին դէմ, այդ պարկեշտ բան չէ:

Դարօս

Ի՞նչ կայ, ի՞նչ եղաք:

Մասգարիյ

Ի՞նչ. երկուսդ ի միասին նոյն ատեն արտիս դէմ հարուածե՞լ զիս աջէն եւ ձախէն, ոհ, այդ անհատական իրաւանց հակառակ է. կուռող կողմերն հաւասար չեն եւ ես կ'աղաղակեմ թէ մարդասպան կայ այստեղ:

Դարօս

Պէտք է ըսել որ սա ամեն բան մի յատուկ ձեւով կ'արտայայտէ:

Մաքլօն

Մտքին մէջ սքանչելի հարպիկութիւն կայ:

Դարօս

Դուք աւելի երկիւղ կ'զգաք քան թէ ցաւ. եւ ձեր սիրտն կը ճչէ՝ վիրաւորուելէ առաջ:

Մասգարիյ

Ինչպէ՞ս, արդեն վիրաւորուած է գլխեն մինչեւ ոտներն:

ՏԵՍԱՐԱՆ ԺԱ.

ԳԱԹՕՍ, ՄԱՏԲԼՕՆ, ՄԱՍԳԱՐԻՑ, ՄԱՌՕԹ

Մառօր

Օրիորդ, կ'ուզեն ձեզ տեսնել:

Մաթլօն

Ո՞վ է:

Մառօր

Տը Եօսրլէ Դերկոմսն:

Մասգարիյ

Տը Եօսրլէ Դերկոմսն է՞:

Մառօր

Այո, պարոն:

Գաթօս

Կը ճանչնամ զինքն:

Մասգարիյ

Ամենալաւ բարեկամս է:

Մաթլօն

Շուտ ներս մտցրու:

Մասգարիյ

Մի ժամանակ է ի վեր միմեանց չենք տեսել, եւ կը հիանամ այս պատահման:

Գաթօս

Անհաւասիկ ինքն:

ՏԵՍԱՐԱՆ ԺԲ.

ԳԱԹՕՍ, ՄԱՏԲԼՕՆ, ԵՕՏԲԼԷ, ՄԱՍԳԱՐԻՑ, ՄԱՌՕԹ, ԱԼՄԱՆԶՕՐ

Մասգարիյ

Ոհ, Դերկո՛մս:

Եօսրլէ

(Համբուրուելով)

Ո՛հ, մարքի՛զ:

Մասգարիյ

Որքան ուրախ եմ ձեզ հանդիպելով:

Եօսրլէ

Որքան բարեբաղդ եմ ձեզ այստեղ գտնելով:

Մասգարիյ

Խնդրեմ մի քիչ ալ համբուրէ զիս:

Մաթլօն՝ *Գաթօսին*

Բարի ընկերուհիս, սկսանք հանչցուիլ, ահա բարձր դասակարգն մեզ տեսնել գալու հանքան բռնեց:

Մասգարիյ

Օրիորդներ, հանեցէք որ ձեզ ներկայացնեմ սա հենքլմենն, կ'երդնում որ ձեզ հետ ծանօթանալու արժանի է:

Եօսրլէ

Արդարութիւն է որ գանք ձեզ մատուցանել մեր պարտականութիւնն, եւ ձեր դիմագծութիւնք իրանց այդ վեհապետական իրաւունքն կը պահանջեն ամեն կարգի անձինքներէ:

Մաթլօն

Շողոքորթութեան վերջին սահմաններն կը հասցնէք ձեր քաղաքավարութիւնն:

Գարօս

Այսօրը մեր օրագրութեան մէջ պէտք է նշանակել իբր մի երջանկաբեր օր:

Մաքլօն *Ալմանզօրին*

Արի տղեկ. ամեն բան միշտ կրկնելո՞ւ է. չէ՞ք տեսներ որ պէտք կայ մի բազկաթոռ աւելցնելու:

Մասգարիյ

Մի զարմանաք, Դերկոմսն այս կերպ տեսնելով, դեռ նոր ելաւ մի հիւանդութիւնէ որ ինչպէս կը տեսնէք, զինք այսպէս դալկահար բրաւ:

Նօսրլէ

Այո, արքունեաց մէջ անքուն մնալու եւ պատերազմի յոգնածութեանց պտուղն այս է:

Մասգարիյ

Դիտէք, օրիորդներ, յանձին դերկոմսին ձեր առջեւն կը տեսնէք դարուս կտրիչներէ մին: Սա մի աննման հերոս է:

Նօսրլէ

Դուք ինձմէ ես չէք մնար, մարքիզ, եւ մենք գիտենք թէ դուք ալ ինչե՞ր կարող էք ընել:

Մասգարիյ

Ճիշտ է որ մենք տեսել ենք մեր ժամանակներն:

Նօսրլէ

Եւ այնպիսի տեղեր ուր շատ տաք էր:

Մասգարիյ

(*Մաքլօնի եւ Գարօսի նայելով*)

Այո, բայց ոչ այնքան տաք որքան այստեղ է հը, հը, հը:

Նօսրլէ

Մենք ծանօթացանք բանակն, եւ առաջին անգամ

երբ որ միմեանց տեսանք, սա Մալթաեան ցոկանաւի վրայ հեծելազօրաց մի գնդի հրամանատարն էր:

Մասգարիյ

Ճիշտ է, եւ սակայն ինձմէ առաջ դուք արդէն նոյն պատշաճն ունեցել էիք. եւ կը յիշեմ որ ես դեռ ենթասպայ էի երբ դուք երկու հազար ձիու կը հրամայէիք:

Նօսրլէ

Պատերազմն սիրուն բան է, բայց հաւատաք վկայ, արքունիքն այժմ շատ վատ կը վարձատրէ մեզ նման պատշաճատարներն:

Մասգարիյ

Ճիշտ դրա համար է որ կուզեմ սուրս պատէն կախել:

Գարօս

Իսկ ես զինեալ մարդկանց համար սաստիկ սէր կ'զգամ:

Մաքլօն

Ես եւս կըսիրեմ, սակայն կուզեմ որ քաջութեան միացած լինի նաեւ տաղանդը:

Մասգարիյ

Կը յիշե՞ս արդեօք, դերկոմս, այն կիսալուսինն զոր բշնամիքն շահեցանք Արրաի պատերազմն ատեն:

Նօսրլէ

Կիսալուսին ըսելով ի՞նչ կուզես հասկցնել, մի կատարեալ, ամբողջ լուսին էր այն:

Մասգարիյ

Կարծեմ թէ իրաւունք ունիս:

Նօսրլէ

Սորա յիշողութիւնը արդարեւ ինձ չափ չէ. մի կրենատիէի հարուածով ես այնտեղ վիրաւորուեցայ սը-

ռունգես որու ճշանն դեռ կը մնայ: Հանեցէք ինչ շշափել, կ'զգաք թէ ի՞նչ հարուած էր ան:

Գարօս (*Այն տեղն շշափելէ յետոյ*)

Ճիշտ է որ սպին մեծ է:

Մասգարիյ

Քիչ ինձ տուէք ձեր ձեռքն, եւ ճանեցէք սա, այնտեղ, ճիշտ գլխիս ետին: Դտա՞ք:

Մասլոն

Այո, մի բան կ'զգամ:

Մասգարիյ

Այդ հրացանի մի հարուածն է զոր ստացայ իմ վերջին ճակատամարտի մէջ:

Եսբլէ (*Կուրծքը բանալով*)

Անհաւասիկ մի ուրիշ հարուած մեկ կողմէս միւսն ծակեց անցաւ, Կրավիինի յարձակման ատեն:

Մասգարիյ

(*Ձեռքը դնելով զանգապանին կոճակին վրայ*)

Ձեզ ցոյց տամ մի անուելի վերք:

Մասլոն

Հարկ չկայ, մենք առանց տեսնելու կը հաստատենք:

Մասգարիյ

Սոքա պատուոյ նշաններ են որ ցոյց կտան մարդուս ինչ լինելն:

Գարօս

Ձեր ինչ մարդիկ լինելուն մենք չենք կասկածիր:

Մասգարիյ

Դերկոմս, կարդ դո՞ւրսն է:

Եսբլէ

Ի՞նչ կայ:

Մասգարիյ

Օրիորդներն տանենք պտցնել քաղաքն դուրս եւ մի նուէր տանք:

Մասլոն

Կարող չենք այսօր դուրս ելնել:

Մասգարիյ

Ուրեմն ջուդակ բերել տանք պարենք:

Եսբլէ

Կ'երդնում լաւ գտաք այդ:

Մասլոն

Այդ բանին համամիտ ենք, բայց հարկ է ուրեմն ընկերների թիւն աւելացնել:

Մասգարիյ

Օհո, Շամբաներ. Բիգար, Պուրկինեոն, Գասգարէ, Պասկ, Լավերտիւր, Լորէն, Բրովենսալ, Լաւիոլեթ: Սատանան տանի բոլոր ծառաներն: Կարծեմ Ֆրանսայ չկայ *մի ահնիմեն* որուն ինձ չափ վաս ծառայեն: Այդ սրիկաներն զիս միշտ առանձին կը թողուն:

Մասլոն

Ալմանզոր, պարոն մարքիզի մարդոց ըսէք որ ջուդակահարներ բերեն, եւ հրաւիրեցէք սա մօտակայ պարոններն եւ կիներն որ մեր պարահանդէսի առանձնութիւնն բազմամարդանայ:

(*Ալմանզոր կը մեկնի*)

Մասգարիյ

Դերկոմս, ի՞նչ կ'ըսես սա աչքերին:

Եսբլէ

Սակայն քեզ, մարքիզ, քեզ ի՞նչպէս կ'երեւին:

Մասգարիյ

Ես, ըսեմ քեզ որ դժուար թէ կարենանք այստեղէ

դուրս ելնել ողջ առողջ: Գոնե ես, տարօրինակ ցնցումներ կ'զգամ. եւ սիրտս դեռնանե կախուած է:

Մաքլօն

Որքա՞ն բնական է բոլոր ըսածներն. խօսքերին հիանալի դարձուածք կտայ:

Գաթօս

Ճշմարիտ որ սրամտութեան ծայրահեղ զեղումներ կ'ընե:

Մազարիյ

Իմ իսկութիւնն ձեզ ցոյց տալու համար, մի *Էմբրօմբրիւ* շինեմ այդ մասին:

(*Մէկուսի կը խօսի*)

Գաթօս

Չէ, սրտիս ամբողջ հաւատքովն կ'երդնում որ մեր վրայ այդքան խռովիչ բան չեմ լսել:

Եօսքլէ

Ես ալ կը փափաքի այդպէս ընել, բայց անցեալ օրեր բաւական արիւն հանել տուած լինելով, բանաստեղծական երակներուս մէջ քիչ տկարութիւն կ'զգամ:

Մազարիյ

Ի՞նչ սատանական բան է այս: Առաջի տողերն միշտ լաւ կը շինեմ, բայց միւսներին կը դժուարանամ: Հաւատացէք որ այս անգամ շատ շտապեցի, պարապ միջոցիս մի *Էմբրօմբրիւ* յօրինեմ որն որ անմահ կը գտնէ:

Եօսքլէ

Նա դեռի չափ խելք ունի:

Մաքլօն

Եւ նրբութիւն եւ սիրուն ոճ:

Մազարիյ

Դերկոմս, ըսէ տեսնեմ, շա՞տ ժամանակ է որ կոմսուհին չես տեսել:

Եօսքլէ

Երեք շաբաթ աւել է որ այցելութիւն չեմ տուած իրան:

Մազարիյ

Գիտե՞ս, այս առաւօտ դուքսը եկաւ զիս տեսնել եւ ուզեց դաշտը տանել իրեն հետ եղջերու հալածելու:

Մաքլօն

Ահա մեր բարեկամուհիներն կգան:

ՏԵՍԱՐԱՆ ԺԳ.

ԼԻՒՍԻԼ, ՍԷԼԻՄԷՆ, ԳԱԹՕՍ, ՄԱՔԼՕՆ, ՄԱՍԳԱՐԻՑ, ԵՕՍՔԼԷ, ՄԱՌՕԹ, ԱԼՄԱՆԶՕՐ, ՋՈՒԴԱԿԱՀԱՐՆԵՐ:

Մաքլօն

Աստուած իմ, սիրելի ազնուուհիք, ներողութիւն կը խնդրենք: Այս պարոններ մեր ոտքերին ոգեւորութիւն տալու խմահանոյին ունեցան, եւ մենք հրաւիրեցինք ձեզ մեր խումբի պակառն լեցնելու:

Լիւսիլ

Ապահով եղէք որ մեզ երախտաւորեցիք:

Մազարիյ

Սա մի անակնկալ պարահանդէս է. բայց այս օրերս ձեզ մի ուրիշն կտանք վայելուչ պայմաններով: Ջուդակահարներն եկա՞ծ են:

Ալմանզօր

Այո պարոն այստեղ են:

Գաթօս

Օն ուրեմն սիրելիք, նստեցէք:

Մասգարիյ

(Իր սկզբնաւորութիւն առանձին պարելով)

Լա, լա, լա, լա, լա, լա, լա, լա:

Մաստլօն

Շատ նրբակազմ հասակ ունի:

Գաթօս

Եւ լաւ պարող կ'երեւի:

Մասգարիյ

(Մաստլօնն առած որ պարէ)

Համարձակութիւնս ոտքերս աւելի սահուն կընթանայ: Ներդաշնա՜կ, ջուդակահարներ, ներդաշնակ: Ոհ, ինչ տգեղներ են, հնար չկայ նոցա ածելովն պարելու: Սատանը տանի ձեզ, չափով նուագել չգի՞տէք. լա, լա, լա, լա, լա, լա, լա, եռանդուն: Ախ գիւղական ջուդակահարներ:

Եօսլէ

(Ապա պարելով)

Ափսոս, ոտնաչափն այդքան մի արագացնէք, ես հիւանդութենէ դեռ նոր ելած եմ:

ՏԵՍԱՐԱՆ ԺԴ.

ՏԻԳՐՈՒԱԶԻ, ԼԱԿՐԱՆԾ ԳԱԹՕՍ, ՄԱՏԼՕՆ, ԼԻՒՍԻԼ, ՍԼԻԼԻՄԷՆ, ԵՕՍԼԷ, ՄԱՍԳԱՐԻՑ, ՄԱՌՕԹ, ՋՈՒԴԱԿԱՀԱՐՆԵՐ:

Լակրանծ

(Ձեռքին մի զաւազան)

Ոհ, ոհ, սրիկաներ, այս ի՞նչ կ'ընէք այս տեղ: Երէք ժամ է որ ձեզ կը փնտռենք:

Մասգարիյ

(Ծեծուիլն զգալով)

Վա՜յ, վա՜յ, դուք ինձ չ'ըսիք թէ հարուածներ ալ պիտի լինին գործին մէջ:

Եօսլէ

Վա՜յ, վա՜յ, վա՜յ:

Լակրանծ

Կ'արժէ ձեզ այս, անամօթներ, որ դուք ձեզ կարեւոր անձինք ձեւացուցել էք:

Տիւզրուազի

Անա թէ ինչպէս կը սովորեցնեն ձեզ ինք զինքիդ ճանչնալ:

ՏԵՍԱՐԱՆ ԺԵ

ԳԱԹՕՍ, ՄԱՏԼՕՆ, ԼԻՒՍԻԼ, ՍԼԻԼԻՄԷՆ. ՄԱՍԳԱՐԻՑ, ԵՕՍԼԷ, ՄԱՌՕԹ, ՋՈՒԴԱԿԱՀԱՐՆԵՐ:

Մաստլօն

Այս ի՞նչ կը նշանակէ:

Եօսլէ

Միմեանց հետ գրաւ բռնել են:

Գաթօս

Ի՞նչ, թոյլ կտա՞ք որ այսպէս ծեծեն ձեզ:

Մասգարիյ

Ասուած իմ, չ'ուզեցի կարեւորութիւն տալ. վասն զի ես կատաղի եմ, եւ անկարող կըլինեի ինձ զսպել:

Մաստլօն

Այդպիսի անարփանաց հանդուրժելի՜ մեր ներկայութեան:

Մասգարիյ

Այս ոչինչ, չենք թողուր որ վերջացնեն: Երկար ատենք ի վեր մենք միմեանց կը ճանչնանք, եւ բարեկամութեան մէջ այսպէս փոքրիկ բաներով վշտանալու չէ:

ՏԱՍՍԱՐԱՆ ԺԶ.

ՏԻԳՐՈՒԱԶԻ, ԼԱԿՐԱՆԺ, ՄԱՏԹԼՕՆ, ԳԱԹՕՍ, ՍԷԼԻՄԷՆ, ԼԻՍԻԼ, ՄԱՍԳԱՐԻՅ, ԵՕՏԹԼԷ. ՄԱՌՕԹ, ՋՈՒԴԱԿԱՀԱՐՆԵՐ:

Լակրանժ

Հաւատս վկայ, սահակներ, դուք մեր վրայ ծիծաղել չէք կարող, կը տեսնէք: Ներս եկէք, դուք:

(3—4 *սուսերամարտներ ներս կը մտնեն*)

Մատթլօն

Այս ինչ ասիենան համարձակութիւն որ կգան մեր տան մէջ մեզ այսպէս վրդովել:

Տիւգրուազի

Ի՞նչպէս, օրիորդներ, հանդուրժեցինք որ մեր ծառաներն աւելի լաւ ընդունուին քան մենք, որ գան մեր ծախքով ձեզ հետ սիրաբանել եւ պար կազմել:

Մատթլօն

Ձեր ծառանե՞ր:

Լակրանժ

Այո մեր ծառաներն. եւ այս ոչ համեստութիւն եւ ոչ բարութիւն է որ դուք կը մոլորեցնէք զիրենք:

Մատթլօն

Ո՞վ երկինք, ի՞նչ լրբութիւն:

Լակրանժ

Բայց այլեւս բաղդ չեն ունենար նոքա մեր զգեստներով ձեզ երեւնալու. եւ եթէ դուք կ'ուզէք սիրել՝ այդ ի հարկէ իրանց սիրուն աչքերի համար կը լինի. շուտ իսկոյն մերկացրէք:

Եօսթլէ

Ց'տե՛սութիւն մեր արդուզարդ:

Մասգարիյ

Ահա մարքիզութիւն եւ դերկոմսութիւն պրծան:

Տիւգրուազի

Ոհ, ոհ, սրիկաներ, յանդգնել էք մեր տիտղոսներն կեղծել: Գնացէք ուրիշ տեղ միջոց գտնել ձեզ հաճելի ներկայացնելու ձեր սիրունիկների աչքին:

Լակրանժ

Կը բաւէ որքան մեր տեղն բռնեցիք եւ մեզ անուանարկեցիք մեր սեպհական զգեստներով:

Մասգարիյ

Ով բաղդ, որքան անհաստա՜տ ես:

Տիւգրուազի

Շուտ, ամենայնեցին բանն իսկ հանեցէք նոցա վրայէն:

Լակրանժ

Տարէք բոլոր այս զգեստներն, շուտ: Այժմ, օրիորդներ, նոցա այս վիճակի մէջ կարող էք շարունակել ձեր սէրն որքան կ'ուզէք, այդ մասին ամեն ազատութիւն կտանք ձեզ, եւ ես ու պարոնն կը վստահացնենք ձեզ որ բնաւ չենք նախանձիր:

ՏԵՍԱՐԱՆ ԺԷ.

ՄԱՏԹԼՕՆ, ԳԱԹՕՍ, ԵՕՏԹԼԷ, ՄԱՍԳԱՐԻՅ, ՋՈՒԴԱԿԱՀԱՐՆԵՐ:

Գաթօս

Ո՜հ, ի՜նչ խայտառակութիւն:

Մաքլօն

Բարկութենէս պիտի պայթիմ:

Զուդակահարներէ մին՝ Մասգարիյին

Այս ի՞նչ է: Իսկ մեզ ո՞վ պիտի վնարէ:

Մասգարիյ

Պարոն Դերկոմսէն պահանջեցէք:

Զուդակահարներէ մին՝ Եօսրլէին

Ո՞վ մեզ դրամ պիտի տայ:

Եօսրլէ

Պարոն Մարֆիզէն պահանջեցէք:

ՏԵՍԱՐԱՆ ԺԸ.

ԿՕՐԺԻՊԻՍ, ՄԱՏԸԼՕՆ՝ ԳԱԹՕՍ, ԵՕՍԸԼԷ, ՄԱՍԳԱՐԻՅ, ԶՈՒԴԱԿԱՀԱՐՆԵՐ:

Կօրժիպիս

Ոհ, որքա՞ն անհամեստ աղջիկներ էք, ինչպէս կը տեսնեմ մեզ շատ խայտառակ դրութեան հասցրել էք. եւ այժմ լսեցի շատ ծանր բաներ այն պարոններէն որ այստեղէ դուրս ելան:

Մաքլօն

Ոհ, հայրիկ, դոքա մի եղերական խաղ խաղացին մեզ:

Կօրժիպիս

Այո, դա մի եղերական խաղ է, բայց ձեր անհամեստութեան հետեւանքն է, անամօթներ: Նոքա խրախուսուել են ձեր վարմունքէն, եւ սակայն, որքան դրժբաղդ եմ որ անարգանքն ես կը կրեմ:

Մաքլօն

Ոհ, կ'երդնում որ դորա վրէժն կը հանենք, թէ չէ արտացաւէս կը մեռնիմ: Եւ դուք, սրիկաներ կը համարձակիք դեռ այս տեղ մնալ ձեր խայտառակութենէ յետոյ:

Մասգարիյ

Մի մարֆիզի հետ այսպէ՞ս վարուիլ. Ահա թէ աշխարհս ի՞նչպէս է, ամենաչնչին դժբաղդութիւնն մեզ անարգել կտայ նոցա՝ որոնք մեզ այնքան կը սիրէին: Երբանք ընկերս, երբանք ուրիշ տեղ որոնենք մեր բաղդը. կը տեսնեմ թէ այս տեղ միմիայն ունայն երեւոյթն կը սիրեն, իսկ բոլորովին մերկ արժանիքն չեն յարգեր:

ՏԵՍԱՐԱՆ ԺԹ.

ԿՕՐԺԻՊԻՍ, ՄԱՏԸԼՕՆ, ԳԱԹՕՍ, ԶՈՒԴԱԿԱՀԱՐՆԵՐ

Զուդակահարներէ մին

Պարոն կը սպասենք որ նոցա տեղ դուք վարձատրէք մեր կատարած նուագածութեան համար:

Կօրժիպիս (*զուդակահարներուն դարնելով*)

Այո, այո, ձեզ վարձատրեմ, եւ ահա այն դրամն որով կ'ուզեմ ձեզ վնարել: Եւ դուք անպիտաններ, չգիտեմ ո՞վ զիս կ'արգիլէ որ ձեզ ալ նոյնն ընեմ. բոլոր աշխարհի ծաղր ու ծանակին նիւթ եղանք եւ դրա պատճառ եղաք դուք ձեր արատաւորութեամբ: Գնացէք, կորսուեցէք, սատանայներ, ընդմիշտ աներեւոյթացէք: *Առանձին*, իսկ դուք որ նոցա խենթութեան պատճառներն էք, դուք, տխմար բարբանջանքներ. անգործ մտքերի ապականիչ զբօսանքներ, վեպեր, յանգերգեր, հնչակ եւ հնչեակներ, ամենքդ ալ սատանան տանի:

Վ Ե Ր Ջ

Հ.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
*C.C.P.A Публичная Библиотека
7/XI-1922
ИМЕНИ А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊ.